

տխմար, անարժան, անսուբբ, փուչ, ինքնակոչ, մեղսապարտ, մեղաւոր, խորհուրդով պղծեալ, հոգևով խաւար, ցնորիւք աղտեղեալ, թիւրեալ, նուաստ հող, մեղաւոր հող, ծոյլ, յողնամեղ, թախնձեալ, բաղմամեղ, տխեղծ, անյիշելի, անարժան ձեռամբ, լիբբ, անհնազանդ, անառակ, թշուառական, թախուր, բաղմաժէր, մեղսասէր, գարշելի...

Անոնք կը խօսին նաեւ՝

Դառն, վշտահար, անբարի ժամանակներու,

Ծերութեան հետեւանքով աչքի լոյսի տըկարանալու, յիշողութեան ուժի պակասելու,

Չանազան հիւանդութիւններու խօսնիկ նոսրաներուն ենթակայ ըլլալու,

Սրտի, գլխու, մէջքի, յոդերու, դողացող ձեռքերու,

Բնակարանային անյարմարութեան եւ չունելորութեան հետեւանք ալ դժուարակեցութեան,

Զմբան ցուրտի, ամբան տապի, տօթի, փաններու, մլուկներու, մժղուկներու շահատակութեանց,

Ընտանիքէն ներս հազարումէկ հոգերու,

Ծանր սուգի հետեւանք սրտաքեկութեանց, արտմութեան մէջ ցրուածութեան եւ նման բաղմապիսի արդելքներու մասին, որոնք խանգարեր են վանքէն դուրս աշխատող աշխարհական մարդոց գործունէութիւնը...

Սակայն, ես երախտապարտ եմ եւ կ'օրհնեմ անոնց յիշատակը: Եւ աւելի կը հպարտանամ զիտնալով, որ անոնք հակառակ ամէն աննպաստ պայմաններու, իմա պատերազմական վիճակ, բարբարոսաց աշխարհաւեր, գերեվարութիւն, տեղահանութիւն, պանդխտութիւն, բնութեան արեաւիրք, երկրաշարժ, հեղեղ, կարկուտ, երաշտ, սով, մուկ, մարախ, համաճարակ, որ միշտ անպակաս են «գրախտանման Հայաստանի» գլխէն, չեն լքած զեղադրելը, ծաղկելը, ոսկելը, նկարագարողելը «ի փառս Աստուծոյ», իսկ ես կ'ըսեմ «ի փառս մեր ազգի եւ ցեղի»:

\* \* \*

**ԳՐԻՉՆԵՐՈՒ ԲՆՈՐՈՇՈՒՄ**

Մեզ հասած գրչագիրներու մէջ, միեւնոյն նիւթը ներկայացնող օրինակներու մէջ, յա-

ճախագէտ են ինչ ինչ զանազանութիւններ, ինչ որ վերագրելի է այն հանգամանքին, թէ եղած են «մասնաւորներ», «ամենայնիւ կարող մարդիկ», որ իրենց անձնական հաճոյքին համար աշխատել են եւ արտագրել բաներ՝ ի վայելումն միայն իրենց անձի:

Այս ամաթօն (amateur) մարդիկ թոյլ են տուած իրենք իրենց յապաւում եւ յաւելումներ անել իրենցը չեղած իմբադրածներու մէջ ու բառերու իմաստին վերաբերմամբ տարբեր, անզամ կամայական կամ քմածին հասկացողութիւններ ունենալ...:

Ընթերցող հանրութիւններու տգիտութիւնը պատճառ եղեր է, որ այս թերութիւնները աննկատելի մնացեր են եւ, ասով շատ անզամ կեղծուեր է իսկականներու իսկութիւնը:

Ղ եւ դ, ձ եւ ծ, ճ եւ ջ, դ եւ կ, նաեւ ք, դ եւ տ, ս եւ ս, եւ այլն տառերու ձեւի ու հնչումի մէջ մօտիկ նմանութիւն,

Նմանահնչիւն վանկերուն եւ բառերուն տրուելիք ուշադրութեան պակաս,

Գրողին բնախօսական, ֆիզիքական եւ հոգեկան անբնականոն վիճակներու ենթակայ ըլլալուն բերմամբ անզիտակից թերացումներ եւ ակամայ սխալմունք,

Մազաղաթը անտեսելու հօդսով սղազրել եւ «պատիւներ»ով գրելու վատթար եղանակ,

Կրակի, մկներու կրծոտելու, խոնաւութեան եւ տղէտ մարդոց անխոհեմ վերաբերմունքի հետեւանքով փճացած, ջնջուած, աւերուած եւ պակասած բնագիրներ,

Ըստ հաճոյս եւ ըստ չտիրոյ հմտութեան օրինակողներու՝ նոյնինքն ըստ անհատական խոտնուածքի՝ ինքնակամ լրացումներ,

Թշնամութեամբ քէնոտած ազգատոհմերու սերունդներուն մէջ անմար ոխակալութեան չգիմացողներու կողմէ գիտակից ջնջուտումներ եւ կամայական յապաւումներ ու յաւելումներ, ուստի նաեւ ամէն կերպ փոփոխութիւն անուններու եւ թուականներու,

Եւ այսօրինակ բաղմաթիւ այլ պատճառներ, որով մեզ՝ խաթարուած վիճակի մէջ հասած են գրչագիր գրականութեան իսկական բնագիրները:

Գրչագիր գիրքերը «ստացողներու» կողմէ եւս այսպիսի սխալներ գործուեր են: Ստացող-